ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«9» հոկտեմբերի 2024 թվականի N: 479 - Ա ք. Գյումրի

ԷԼՄԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 2.2-րդ կետի, 6-րդ կետի, նույն որոշմամբ սահմանված N 5 հավելվածի 44-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Էլմիրա Կարապետյանի 2024 թվականի հոկտեմբերի 8-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բավրայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Էլմիրա Կարապետյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդից մնացած մասը՝ 11 աշխատանքային օր՝ 2024 թվականի հոկտեմբերի 17-ից 31-ը ներառյալ:

2. Էլմիրա Կարապետյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բավրայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտաանությունները կատարող նշանակել նույն կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Սայաթ Սումբուլյանին:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է